*
* *

Մի ապառաժոտ, վեհ լերան կրծքին
Բողբոջ շուշանը միայնակ կանգնած,
Հայեացքն առած կապույտ երթերին,
Սիրավառ քոյրը սրտի մէջ լցուած,

Ամպերն են միայն նորան փայփայում.
Արեւն ու լուսին ժպտում խնդագին,
Բարակ սիւզերը տաղեր շշնջում.
Ա՜խ, սիրոյ տաղեր, մրմունջ սրտագին։

Եւ դառն կարօտ մաշում էր նորան,
Լոյս էր սպասում տխրամած սրտին՝
Եւ անմխիթար մենաւորութեան
Կենսատու ճրագ, մի կայծ երկնային։

Դարձեալ ամպերն են սիրով գուրգուրում.
Քաղցրիկ համբոյրներ առատ թափելով.
Յուսաւոր գիշերին գրկի մէջ պահում,
Պճնում աստղաշող աղամանդներով։

Բայց զոհ չէր ընաւ ծերուկ թխպերից.
Եւ երերում էր, տխուր շշնջում.
Աղբիւր էր ըղխում այն լերան կրծքից,
Նորան էր միայն,—նորան կարօտում։

ԱՐՇԱԿ ԿԱՑԵՆՈՒՆԻ